ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2
ԵՊՀ ՔԻՄԻԱՅԻ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ և ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՏԻԼԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
N «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-26/04» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «06» հունվարի 2026թ.

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը, ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա /այսուհետ «Պատվիրատու» մի կողմից, և Էկոլոգիա Վ.Կ.Հ. ՍՊԸ-ն, ի դեմս Էկոլոգիա Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի տնօրեն Խ.Մողրովյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից /երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր/ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, ինչպես նաև «09» դեկտեմբերի 2025թ. կնքված « ԵՊՀ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.15 կետերը, Կողմերը որոշեցին շարունակել համագործակցությունը պայմանագրի շրջանակներում և հաստատել 2026թ. մատուցման ենթակա ծառայությունների՝

ա/ Վճարման ժամանակացույցը, համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| «ԵՊՀ» Հիմնադրամ | Վ.Կ.Հ. ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | Արմավիրի մ.,ք.Վաղարշապատ |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | ՀՎՀՀ 04719486 |
| ՀՎՀՀ 01506928 | ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 2470100009060000 | Հ/Հ 16017038839300 |
| Պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան | Տնօրեն Խ.Մողրովյան |
| -------------------------------- | -------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

